ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն՝ Կարեն Անդրեասյան, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ (այսուհետ՝ ներկայացուցիչ)

Գործուղման վայրը և ժամկետները՝

1) 2025 թվականի դեկտեմբերի 8-ից 12-ը՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն),
2) 2025 թվականի դեկտեմբերի 15-ից 18-ը՝ Նիդերլանդների Թագավորություն (Հաագա).

Գործուղման նպատակը՝

1) Լոնդոնում աշխատանքային այցի հիմնական նպատակը եղել է «TRIPP» նախագծի միջպետական պայմանագրային փաթեթի մշակման աշխատանքները «Fieldfisher LLP» իրավաբանական ընկերության հետ իրականացնելը:
2) Հաագայում՝ Միջազգային արդարադատության դատարանում քննվող երկու գործերի շրջանակներում ընթացակարգային հարցերի վերաբերյալ դիրքորոշումներ ներկայացնելը:

Հանդիպումները, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

1) Լոնդոնում աշխատանքային այցի ընթացքում «Fieldfisher LLP» իրավաբանական ընկերության ներկայացուցիչների հետ քննարկվել է «TRIPP» նախագծի իրականացմանը վերաբերող իրավապայմանագրային բնույթի հարցեր, կազմվել են փաստաթղթերի նախագծեր, որոնք փոխանցվել են աշխատանքային կարգով: Հաշվի առնելով հաշվետվության հասանելիությունը՝ հիշյալ քննարկումների վերաբերյալ լրացուցիչ մանրամասները, ըստ անհրաժեշտության, կտրամադրվեն այլ, այն է՝ սահմանափակ հասանելիության ձևաչափով:
2) Հաագայում՝ Արդարադատության միջազգային դատարանում քննվող՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի շրջանակներում Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի և Ադրբեջանն ընդդեմ Հայաստանի գործերի շրջանակներում կողմերի

ներկայացուցիչների միջև քննարկվել և դատարանի հետ համաձայնեցվել են ընթացակարգային բնույթի հարցեր, կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել գործի քննության հետագա փուլերի և դատավարական գործողությունների իրականացման հետագա ժամկետների վերաբերյալ: Միաժամանակ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի կողմից լրացուցիչ քննարկումներ են անկացվել ՀՀ շահերը դատարանում ներկայացնող իրավախորհրդատուների թիմի հետ նշված գործերի վերաբերյալ առկա իրավիճակի և հետագա գործողությունների ռազմավարության վերաբերյալ: Հաշվի առնելով հաշվետվության հասանելիությունը՝ նշվածի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունները, ըստ անհրաժեշտության, կտրամադրվեն այլ, այն է՝ սահմանափակ հասանելիության ձևաչափով:

Կարեն Անդրեասյան՝

Recoverable Signature

Ստորագրող
ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
2009770196

X

2025-12-23 18:05:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Signed by: ANDREASYAN KAREN 2009770196

23.12.2025թ.